«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ 063 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ԿԱՐԾԻՔ

ՀՐԱՆՏ ԱՐՄԵՆԻ ՍԱՐԿԻՍՈՎԻ՝ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՒԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԺԲ.00.02 - «ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ - ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ՄՈՒՆԻՑԻՊԱԼ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրանտ Արմենի Սարկիսովի **«Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի ուսումնասիրությունը պայմանավորված է դրա առանցքային դերով ազգային անվտանգության քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ Անվտանգության խորհուրդը ճանաչվել է որպես սահմանադրական մարմին, ինչը վկայում է նրա առանձնահատուկ տեղն ու նշանակությունը պետական կառավարման համակարգում: Միաժամանակ դրա սահմանադրական կարգավիճակի վերաբերյալ շարունակում են գոյություն ունենալ մի շարք տեսական և գործնական հարցեր, որոնք վերաբերում են լիազորությունների բնույթին, ընդունվող ակտերի իրավական ուժին, այլ պետական մարմինների հետ փոխհարաբերություններին, ինչպես նաև անվտանգության ոլորտում կայացվող որոշումների սահմանադրական հիմքերին: Հետևաբար, Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի համակողմանի ուսումնասիրությունը անհրաժեշտ է ոչ միայն գործող իրավակարգավորման բովանդակությունը բացահայտելու, այլև դրա կատարելագործման հնարավոր ուղղությունները գնահատելու տեսանկյունից:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ժամանակակից անվտանգային միջավայրում ազգային անվտանգության սպառնալիքների բնույթը էականորեն փոխվել է՝ ընդգրկելով

ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, կիբեռանվտանգության և այլ ոլորտներ: Այս պայմաններում Անվտանգության խորհրդի արդյունավետ գործունեությունը մեծապես կախված է նրա սահմանադրաիրավական կարգավիճակի հստակությունից, լիազորությունների իրավական որոշակիությունից և պետական իշխանության այլ մարմինների հետ փոխգործակցության արդյունավետ մեխանիզմներից: Ուստի նշված հիմնահարցերի գիտական ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ինչպես սահմանադրական իրավունքի տեսության զարգացման, այնպես էլ ազգային անվտանգության ոլորտի իրավական կարգավորման կատարելագործման համար:

Գրախոսվող ատենախոսության հիմնական արժանիքներից է հետազոտության առարկայի համալիր և համակարգային ուսումնասիրությունը: Հեղինակը քննության է առել ոչ միայն Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի ստեղծման և զարգացման պատմաիրավական առանձնա-հատկությունները, այլև դրա կազմավորման կարգը, կառուցվածքը, ընդունվող իրավական ակտերի բնույթը, ինչպես նաև պետական այլ մարմինների հետ փոխհարաբերությունները:

Աշխատանքի գիտական արժեքը պայմանավորված է նաև արտասահմանյան փորձի և համապատասխան նորմատիվ իրավական աղբյուրների լայն շրջանակի ուսումնասիրությամբ: Տարբեր պետությունների Անվտանգության խորհուրդների կազմակերպաիրավական մոդելների վերլուծությունը հնարավորություն է տվել հեղինակին բացահայտելու ուսումնասիրվող ինստիտուտի ընդհանուր օրինաչափություններն ու ազգային առանձնահատկությունները:

Ատենախոսությունն ունի նաև գործնական նշանակություն, քանի որ դրանում ներկայացված մի շարք եզրահանգումներ և առաջարկություններ կարող են օգտակար լինել Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի իրավական կարգավիճակի և գործունեության օրենսդրական կարգավորումների հետագա կատարելագործման համար:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի, դրա կազմի և կառուցվածքի, ընդունվող ակտերի իրավական բնույթի, ինչպես նաև պետական մարմինների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ հեղինակի կողմից ձևակերպված տեսական եզրահանգումներում և օրենսդրական առաջարկություններում:

Ատենախոսության թեման և բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Ընդհանուր ընդունելությամբ հեղինակի կատարած աշխատանքը, այնուհանդերձ

իրավական կարգավիճակի և գործունեության օրենսդրական կարգավ

1. Աշխատանքում բավարար չափով հիմնավորված չէ, թե ինչ չափանիշներով են համեմատական ուսումնասիրության համար ընտրվել հենց ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Անվտանգության (Ազգային անվտանգության) խորհուրդները: Հստակ չեն ներկայացվում նաև նշված պետությունների համեմատական վերլուծությունից բխող սահմանադրաիրավական օրինաչափություններն ու Հայաստանի Հանրապետության համար դրանց կիրառելիության սահմանները:

2. Ատենախոսության 1.3 ենթագլխում ներկայացված Անվտանգության խորհուրդների դասակարգման չափանիշները բավարար չափով չեն հիմնավորվում 1.1 և 1.2 ենթագլուխներում կատարված համեմատական վերլուծության արդյունքներով: Բացի այդ, դասակարգման շրջանակում Լատվիայի փորձի ներառումը գիտամեթոդական տեսանկյունից հիմնավորված չէ, քանի որ չի պարզաբանվում դրա ընտրության անհրաժեշտությունը և նշանակությունը ներկայացված դասակարգման համար:

3. Աշխատանքում անդրադարձ է կատարվում «թվային ինքնիշխանության»ը և համացանցից բխող ազգային անվտանգության մարտահրավերներին, սակայն բավարար չափով չի պարզաբանվում, թե դրանց հակազդման գործում ինչ սահմանադրաիրավական դեր և իրավասություններ պետք է վերապահվեն Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդին:

4. 3.2 ենթագլխի վերնագրից կարելի է ենթադրել, որ ենթագլուխը նվիրված է Անվտանգության խորհրդի՝ գործող իրավակարգում իրավաստեղծ գործունեության ուսումնասիրությանը, մինչդեռ դրա հիմնական բովանդակությունը վերաբերում է Անվտանգության խորհրդին լրացուցիչ լիազորությունների վերապահման հիմնավորմանը: Արդյունքում ենթագլխի վերնագիրն ամբողջությամբ չի արտացոլում դրա բովանդակությունը:

5. Աշխատանքում առկա են նաև մասնավոր բնույթի այլ թերություններ, խմբագրական անճշտություններ, հեղինակային մտքի ոչ հստակ ձևակերպումներ:

Չնայած վերոգրյալին՝ նշված թերությունները չեն նսեմացնում աշխատանքի որակը, գրախոսման ներկայացված ատենախոսությունը ամբողջական և ավարտուն հետազոտություն է, հեղինակին հաջողվել է հասնել հետազոտության նպատակներին, և առաջադրված խնդիրներին տալ հիմնավոր պատասխաններ:

Ամփոփելով վերը շարադրվածը, գտնում ենք, որ **Հրանտ Արմենի Սարկիսովի «Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները»** թեմայով թեկնածուական ատենախոսությունը ավարտուն և համալիր հետազոտություն է, այն համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, և ներկայացված

աշխատանքի համար հեղինակն արժանի է ԺԲ.00.02- «Հանրային իրավունք- սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Հասմիկ Ստեփանյան

20 հուլիսի 2026

Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Հասմիկ Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

«Ռուս-հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության գիտական քարտուղար

բ.գ.թ. Ռոզա Կասաբաբովա

«20» հուլիսի 2026